ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

երկրորդ ընթերցում

Կ-753[1]-26.12.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ եւ 10-րդ մասերով.

«4. Արգելվում է օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված վիճակախաղերին մասնակցությանը հնարավորության ստեղծումը, ինչպես նաեւ այդ խաղերի գովազդումը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունում հասանելի ամբողջ համացանցի տիրույթում:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է օտարերկրյա պետություններում կազմակերպված եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված վիճակախաղերին մասնակցությանը հնարավորության եւ հասանելիության արգելափակման դեպքերը եւ կարգը:

6. Օտարերկրյա պետություններում կազմակերպված եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված վիճակախաղերի կայքերն ենթակա են արգելափակման ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում՝ արգելափակման ենթակա կայքերի ցանկի հիման վրա:

7. Սույն օրենքով նախատեսված արգելափակման ենթակա կայքերի ցանկերը հաստատվում են լիազոր մարմնի ղեկավարի կողմից արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա:

8. Արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի կազմը, աշխատակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչապետը: Արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունները տրվում են սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

9. Սույն հոդվածի 6-րդ մասի խախտման դեպքում ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորները կրում են պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի եւ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով՝ լիազոր մարմնի դիմումի համաձայն:

10. Արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովը հրապարակում է սույն հոդվածի 7-րդ մասի համապատասխան արգելման ենթակա կայքերի ցանկում ներառված կազմակերպությունների դրամապանակների ցանկը:

Հոդված 2. Օրենքի 5.2-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակության 5-րդ մասով.

«5. Հայաստանի Հանրապետության տարածքում տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցների մուտքագրումը, խաղադրույքների կատարումն եւ դրամական (փողային) շահումների հանձնումը (ելքագրումը) փոխանցվում (վճարվում) է՝ հայկական դրամով: Հատուկ խաղային հաշիվների դրամական միջոցների մուտքագրումն (համալրումն), խաղադրույքների կատարումն եւ դրամական (փողային) շահումների հանձնումը (ելքագրումը) փոխանցվում (վճարվում) է անկանխիկ եղանակով՝ հայկական դրամով կամ արտարժույթով, երբ խաղացողը չի հանդիսանում Հայաստանի

Հանրապետության քաղաքացի, նույնականացման ընթացքում խաղացողի կողմից նշված բնակության վայրը (գրանցման հասցեն) չի գտնվում Հայաստանի Հանրապետությունում եւ գործարքը կատարվել է ոչ Հայաստանի Հանրապետության համապատասխան համացանցային հաղորդակարգի (IP) հասցեյից (գործարքի կատարման պահին չի գտնվում Հայաստանի Հանրապետության տարածքում), եւ դրամական միջոցների մուտքագրման (համալրման), խաղադրույքների կատարման եւ դրամական (փողային) շահումների հանձնման (ելքագրման) փոխանցումը (վճարումը) չի իրականացվում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկի կամ վճարահաշվարկային կազմակերպության միջոցով, ընդ որում, դրամական (փողային) շահումների հանձնումը (ելքագրումը) կատարվում է նույն արժույթով, որով կատարվել են խաղադրույքները, հատուկ խաղային հաշիվների դրամական միջոցների մուտքագրումը (համալրումը):»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.1-րդ, 6.2-րդ եւ 6.3-րդ մասերով.

«6.1. Յուրաքանչյուր տարի վիճակախաղերի կազմակերպչի՝ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով նախատեսված ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) պետք է ենթարկվեն աուդիտի՝ սույն հոդվածի 6.2-րդ մասով սահմանված ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշներին բավարարող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից, ընդ որում պայմանագիր միեւնույն աուդիտորական կազմակերպության հետ կարող է կնքվել անընդմեջ առավելագույնը 3 տարի:

6.2. Կազմակերպիչների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպությունը.

1) պետք է ունենա առնվազն 5 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում ըստ միջազգային խմբի

տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վրա:

2) ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության աուդիտի անցկացման համար պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ եւ առնվազն 5 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ, ինչպես նաեւ՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում եւ միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

6.3. Սույն հոդվածի 6.2-րդ մասով սահմանված ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշներին չբավարարող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից տրված անկախ աուդիտորական եզրակացության դեպքում ֆինանսական հաշվետվությունները կհամարվեն չհրապարակված:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 1-ին եւ 3-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո: Սույն օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը Կառավարությունը ընդունում է օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

~~*Առաջին ընթերցում*~~
Երկրորդ ընթերցում

Կ-753/-26.12.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐ ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ եւ 10-րդ մասերով.

«4. Արգելվում է օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված վիճակախաղերին մասնակցությանը հնարավորության ստեղծումը, ինչպես նաեւ այդ խաղերի գովազդումը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունում հասանելի ամբողջ համացանցի տիրույթում:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է օտարերկրյա պետություններում կազմակերպված եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված վիճակախաղերին մասնակցությանը հնարավորության եւ հասանելիության արգելափակման դեպքերը եւ կարգը:

6. Օտարերկրյա պետություններում կազմակերպված եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված վիճակախաղերի կայքերն ենթակա են արգելափակման ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների կողմից՝ ~~«~~ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում՝ ~~Լիազոր~~

~~մարմնի ղեկավարի կողմից հաստատված~~ արգելափակման ենթակա կայքերի ցանկի հիման վրա:

7. Սույն օրենքով նախատեսված արգելափակման ենթակա կայքերի ցանկերը հաստատվում են ~~Լ~~լիազոր մարմնի ղեկավարի կողմից արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա:

8. Արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի կազմը, աշխատակարգը սահմանում է ~~ՀՀ~~ Հայաստանի Հանրապետության վարչապետը: Արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունները տրվում են սույն օրենքով եւ ~~ՀՀ~~ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

9. Սույն հոդվածի 6-րդ մասի խախտման դեպքում ~~դեպքում~~ ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորները կրում են պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի եւ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ~~ Օ~~օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով՝ լիազոր մարմնի դիմումի համաձայն:

10. Արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովը հրապարակում է սույն հոդվածի 7-րդ մասի համապատասխան արգելման ենթակա կայքերի ցանկում ներառված կազմակերպությունների դրամապանակների ցանկը:

Հոդված 2. Օրենքի 5.2-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակության 5-րդ մասով.

«5. Հայաստանի Հանրապետության տարածքում տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցների մուտքագրումը, խաղադրույքների կատարումն եւ դրամական (փողային) շահումների հանձնումը (ելքագրումը) փոխանցվում (վճարվում) է՝ հայկական դրամով: Հատուկ խաղային հաշիվների դրամական միջոցների մուտքագրումն (համալրումն), խաղադրույքների կատարումն եւ դրամական (փողային) շահումների

հանձնումը (ելքագրումը) փոխանցվում (վճարվում) է անկանխիկ եղանակով՝ հայկական դրամով կամ արտարժույթով, երբ ~~խաղի մասնակիցը~~ խաղացողը չի հանդիսանում ~~ՀՀ~~ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, նույնականացման ընթացքում ~~խաղի մասնակցի~~ խաղացողի կողմից նշված բնակության վայրը (գրանցման հասցեն) չի գտնվում Հայաստանի Հանրապետությունում եւ գործարքը կատարվել է ոչ Հայաստանի Հանրապետության համապատասխան համացանցային հաղորդակարգի (IP) հասցեյից (գործարքի կատարման պահին չի գտնվում Հայաստանի Հանրապետության տարածքում), եւ դրամական միջոցների մուտքագրման (համալրման), խաղադրույքների կատարման եւ դրամական (փողային) շահումների հանձնման (ելքագրման) փոխանցումը (վճարումը) չի իրականացվում ~~ՀՀ~~ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկի կամ վճարահաշվարկային կազմակերպության միջոցով, ընդ որում, դրամական (փողային) շահումների հանձնումը (ելքագրումը) կատարվում է նույն արժույթով, որով կատարվել են խաղադրույքները, հատուկ խաղային հաշիվների դրամական միջոցների մուտքագրումը (համալրումը)։»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.1-րդ, 6.2-րդ եւ 6.3-րդ մասերով.

«6.1. Յուրաքանչյուր տարի վիճակախաղերի կազմակերպչի՝ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով նախատեսված ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) ~~պետք է ենթարկվեն աուդիտի՝~~ պետք է ենթարկվեն աուդիտի՝ սույն հոդվածի 6.2-րդ մասով սահմանված ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշներին բավարարող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից, ընդ որում պայմանագիր միեւնույն աուդիտորական կազմակերպության հետ կարող է կնքվել անընդմեջ առավելագույնը 3 տարի:

6.2. Կազմակերպիչների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպությունը.

1) պետք է ունենա առնվազն 5 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վրա:

2) ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության աուդիտի անցկացման համար պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ եւ առնվազն 5 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ, ինչպես նաեւ՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում եւ միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

6.3. Սույն հոդվածի 6.2-րդ մասով սահմանված ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշներին չբավարարող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից տրված անկախ աուդիտորական եզրակացության դեպքում ֆինանսական հաշվետվությունները կհամարվեն չհրապարակված:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 1-ին եւ 3-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո: Սույն օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը Կառավարությունը ընդունում է օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-753-26.12.2023-ՏՀ-011/1, «ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-753[1]-26.12.2023-ՏՀ-011/1 ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-753[2]-26.12.2023-ՏՀ-011/1 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում նոր լրացվող 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ մասերի բովանդակությունը չի համապատասխանում Օրենքի 4-րդ հոդվածի վերնագրին: Օրենքի 4-րդ հոդվածը ունի «Շահումով խաղեր, ինտերնետ շահումով խաղերի,	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող կարգավորումները նախատեսել առանձին հոդվածի տեսքով:	Ընդունվել է:

			խաղատների գործունեություն կազմակերպողները» վերտառումը, սակայն Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ մասերը վերաբերում են որոշակի խումբ ինտերնետ շահումով խաղերի մասնակցության հնարավորության ստեղծմանը արգելելուն, այդ արգելքի պահպանման մեխանիզմեր սահմանելուն: Ուստի առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող կարգավորումները նախատեսել առանձին հոդվածի տեսքով և չլրացնել Օրենքի 4-րդ հոդվածում՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, առ այն, որ «*Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը:*»: Ըստ այդմ՝ Նախագծի 1-ին հոդվածում «օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ,4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ եւ 9-րդ		

			մասերով» բառերն առաջարկում ենք փոխարինել «Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.4-րդ հոդվածով. «**Հոդված 4.4. Օտարերկրյա պետություններում կազմակերպված ինտերնետ շահումով խաղերը**» բառերով և համապատասխանեցվել է համարակալումը:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մաս, «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 6-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ և 6-րդ մասերում առկա է արգելափակման ենթակա կայքերի ցանկերը Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատվելու մասին մտքի կրկնություն, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասում «Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված» արտահայտությունը հանել՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը: Նույն առաջարկությունը վերաբերում է «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի	Ընդունվել է: Համապատասխան հոդվածները խմբագրվել են:	Ընդունվել է:

			նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 6-րդ մասին:		
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտեի կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 1-ն հոդվածով լրացվող 6-րդ մասում և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 7-րդ մասում «Լիազոր մարմին» բառերը փոխարինել «լիազոր մարմին» բառերով:	Ընդունվել է: Համապատսխան հոդվածները խմբագրվել են:	Ընդունվել է:

4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 5-րդ, 7-րդ մասեր, 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 6-րդ հոդվածի 2.1-ին մաս, «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր լրացվող 8-րդ մաս, 2-րդ հոդվածով նախատեսվող օրենքի 5.2-րդ հոդվածում լրացվող 5-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ, 7-րդ մասերում, 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 6-րդ հոդվածի 2.1-ին մասում նոր խմբագրությամբ շարադրվող «q1» կետում, «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 8-րդ մասում, 2-րդ հոդվածով նախատեսվող «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 5.2-րդ հոդվածում լրացվող 5-րդ մասում առաջարկում ենք «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով:	Ընդունվել է: Համապատասխան հոդվածները խմբագրվել են:	Ընդունվել է:

5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով նոր լրացվող 8-րդ մաս, «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր լրացվող 9-րդ մաս, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 8-րդ մասում «Օրենքով» բառն առաջարկում ենք փոխարինել «օրենքով» բառով: Նույն առաջարկը վերաբերելի է նաև «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Վիճակախաղերի մասին» օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 9-րդ մասում կիրառված «Օրենքով» բառին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նոր լրացվող 150.17-րդ հոդվածում կիրառված «Օրենքներով» բառին:	Ընդունվել է: Համապատասխան հոդվածները խմբագրվել են:	Ընդունվել է:

6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 9-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 9-րդ մասում «արգելման» բառն առաջարկում ենք փոխարինել «արգելափակման» բառով:	Ընդունվել է: Համապատասխան հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 6-րդ հոդվածի 2.1-ին մասում նոր խմբագրությամբ շարադրվող «զ1» կետում «խաղի մասնակից» բառերը փոխարինել «խաղացողը» բառը՝ համապատասխան հոլովաձևերով: Նույն առաջարկությունը վերաբերում է «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածին:	Ընդունվել է: Համապատասխան հոդվածները խմբագրվել են:	Ընդունվել է:

«Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ)

1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Վիճակախաղերի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածով նոր լրացվող 9-րդ մասում կրկնվող «դեպքում» բառը հանել:	Ընդունվել է: Կատարավել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը պահպանելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող «Վիճակախաղերի մասին» օրենքի 7-րդ հոդվածով նոր լրացվող 6.1-րդ մասում կրկնվող «պետք է ենթարկվի աուդիտի՝» արտահայտությունը հանել:	Ընդունվել է: Համապատսխան հոդվածները խմբագրվել են:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հովածով լրացվող Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մաս, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «4. Արգելվում է օտարերկրյա պետություններում կազմակերպված վիճակախաղերին մասնակցությանը հնարավորության ստեղծումը, ինչպես նաև այդ խաղերի գովազդումը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունում հասանելի ամբողջ համացանցի տիրույթում:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		օրենքի նախագծի Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում նոր լրացվող 3-րդ մաս	Այս կապակցությամբ ցանկանում ենք նշել, որ «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան լիցենզիա չստացած վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կազմակերպիչներն իրավունք չունեն իրականացնելու համապատասխան գործունեության գովազդ Հայաստանի Հանրապետությունում: Ուստի, առաջարկում ենք, վերոնշյալ 4-րդ մասում «օտարերկրյա պետություններում կազմակերպված» բառերից հետո լրացնել նաև «և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված» բառերը՝ իրավական ակտերի միջև առկա անհամապատասխանությունից խուսափելու նպատակով: Վերոնշյալ դիտարկումները վերաբերելի են նաև «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով		

			խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի համանման կարգավորումներին: Ըստ այդմ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 4-րդ հոդվածում լրացվող 3-րդ մասում «օտարերկրյա պետություններում կազմակերպված» բառերից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպված» բառերը:		

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ)

1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր 150-17-րդ հոդվածի պարբերություններ առաջարկում ենք համարակալել՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասի հստակեցման նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «ընթացքում» բառից հետո լրացնել «վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո» բառերը: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծերով նախատեսվող տուգանքների չափերը սահմանել հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում տուգանքի չափի որոշման համար օգտագործվող արտահայտությունները՝ որպես հաշվարկային հիմք ընդունել օրենքով սահմանված նվազագույն	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			ամսական աշխատավարձը (1000 դրամը): Ըստ այդմ՝ առաջարկվում է Ըստ այդմ՝ Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի» բառերն առաջարկում ենք փոխարինել «նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի» բառերով, իսկ Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «երեք միլիոն դրամի» բառերը՝ «նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկի» բառերով:		